

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Է.Մ. Սանդոյան

07» օգոստոսի 2024 թ.



ԿԱՐԾԻՔ

Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2024 թվականի օգոստոսի 07-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 11-24):

Մասնակցում էին՝

- Սանդոյան Էդվարդ Մարտինի՝** տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (**գրախոսող**), **Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝** տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Չախոյան Էլիզա Միքայելի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի,** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Գասպարյան Ռուբեն Լևոնի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Խաչատրյան Հովակիմ Խաչիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Խուրբարյան Նարեկ Համլետի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի՝** ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հանիսյան Հրայր Հովիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Գարիկ Արմենակի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (**գրախոսող**), **Պետրոսյան Հեղինե Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (**գրախոսող**), **Նաշիկյան Լիլիա Աշոտի՝** ավագ դասախոս, **Սարգսյան Լիլիթ Կարենի՝** ավագ դասախոս,

Կարապետյան Անուշ Արմենի՝ դասախոս, **Պապյան Զինավարդ Կարենի՝** դասախոս, **Շմավոնյան Էլեն Հակոբի՝** ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երկրի հարկային համակարգի արդյունավետությունը մեծապես որոշվում է դրանում սահմանված հարկատեսակներով: Որոշ հարկատեսակներ՝ անկախ դրանց հիմնավորվածության աստիճանի, դիտարկման ենթակա չեն, քանի որ դրանցից որոշները պահանջում են հավաքագրման մեծ ծախսեր, իսկ որոշները ցանկալի չէ կիրառել մի շարք տնտեսավարող սուբյեկտների վրա: Այդ առումով հարկային համակարգում հիմնավորված հարկատեսակների սահմանումը և պետական գործառույթների իրականացման համար առավելագույն ծավալով եկամուտների մոբիլիզացումը պետք է ուղեկցվի հարկային քաղաքականության պարզեցմամբ և հարկային վարչարարության կատարելագործմամբ:

Կարևորելով Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումներն՝ այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ ներկայումս այդ համակարգում առկա են չլուծված խնդիրներ, որոնք կապված են հարկային քաղաքականության պարզեցմամբ և վարչարարության կատարելագործմամբ: Նշված խնդիրները լուծելու և հանրապետության առջև ծառայած նպատակներն իրականացնելու գործում ակնհայտորեն առանցքային է հարկային վարչարարության դերը: Վերջինիս կատարելագործմամբ է մեծապես պայմանավորված պետական եկամուտների ապահովումը և պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորումը: Միաժամանակ հարկային վարչարարության կատարելագործումն ուղղակիորեն փոխկապակցված է վարվող հարկային քաղաքականության հետ, ինչը պահանջում է այդ ոլորտում իրականացվող բարեփոխումները դիտարկել որպես միասնական գործընթաց: Այլ կերպ ասած՝ առանց հարկային վարչարարության արդյունավետ մեխանիզմների ներդրման և շարունակական կատարելագործման հնարավոր չէ լուծել հարկային քաղաքականության առջև դրված խնդիրները:

ՀՀ-ում հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով ատենախոսությունում դրվել և լուծվել են հարցեր, որոնք ուղղված են հարկային օրենսդրության հստակության ապահովման, ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և դրույքաչափերի վերանայման, ստվերային տնտեսության ծավալների կրճատման, անկանխիկ եղանակով գործարքների իրականացման խթանման, վարձակալության պայմանագրերի պետական գրանցման պարզեցման, հարկային արտոնությունների տրամադրման, հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման, որակյալ և բանիմաց մարդկային ռեսուրսների համալրման և այլ խնդիրների լուծմանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունը, հետազոտության արդիականությունն ու նշանակությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ հարկային համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումների ու առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ❖ ուսումնասիրել հարկերի գործառույթները և հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը,
- ❖ բացահայտել ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները,
- ❖ ուսումնասիրել հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները,
- ❖ գնահատել հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքները, մշակել հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ,
- ❖ հաշվարկել ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատել վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա,
- ❖ մշակել վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը վերաբերում են ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր և կիրառելի ուղիների առաջադրմանը, և ըստ ատենախոսի կարող են ձևակերպվել հետևյալ կերպ.

1. Միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային համակարգի արդյունավետությունը և մշակվել են առաջարկություններ ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և շեմերի վերանայման ուղղությամբ:
2. Մշակվել են հարկային արտոնությունների տրամադրման և գնահատման մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել՝ արտոնությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման և մշտադիտարկման մեթոդաբանություն:
3. Հարկ վճարողների վարքագծային ուսումնասիրության հիման վրա մշակվել են հարկային վարչարարության կատարելագործման նոր մոտեցումներ՝ ուղղված հարկային պարտքերի ծավալների կրճատմանը, հարկման բազաների գնահատմանն ու հարկ վճարողների հաշվառմանը, մասնավորապես՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի գրանցման ընթացակարգերի պարզեցմանը:
4. ՀՀ հարկային համակարգի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների բարելավման նպատակով մշակվել են մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ և հարկային մարմնի աշխատողների մոտիվացիայի ու կարիերային առաջխաղացման արդյունավետ կառուցակարգեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից հարկային վարչարարության և քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի համալիր մշակման, վերջիններիս իրականացման ընթացքում հետևողական վերահսկողության գործընթացներում: Հետազոտությունը գործնականում նախադրյալներ է ստեղծում ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային արտոնությունների ոլորտում առկա խնդիրների լուծման, հարկային պարտքերի կրճատման, վարձակալության պայմանագրի հայտարարագրման համակարգի պարզեցմանն ուղղված հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 173 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը: Այն պարունակում է 16 աղյուսակ և 5 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել են թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային համակարգի դերն ու նշանակությունը տնտեսական հարաբերությունների զարգացման գործում», գլխում ուսումնասիրվել են հարկային համակարգի էությունը, հարկերի գործառույթները, հարկման նպատակները, հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև ուսումնասիրվել է հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները», գլխում բացահայտվել են ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները, ինչպես նաև ուսումնասիրվել են հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները», գլխում հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային վարչարարությունը, մշակվել է հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ, հաշվարկվել է ՀՀ-ում ԱԱՀ-ի

շեմի օպտիմալ մակարդակը և գնահատվել է վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, մշակվել է վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հետազոտության 5-րդ էջում ներկայացված են նորոյթները, սակայն՝
 - 1-ին կետով նշված նորոյթը՝ «ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատումը» չի կարող հանդիսանալ նորոյթ, քանի որ ներկայումս առկա են բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնցում դա արդեն իսկ արված է;
 - 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված է, որ արվել են «նոր մոտեցումներ», սակայն դրանք հստակ սահմանված չեն: Գտնում ենք, որ տվյալ կետերը հստակեցման կարիք ունեն և այս տեսքով աշխատության նորոյթները նկարագրված չեն:
2. Հետազոտության Գլուխ 1.2 վերնագիրը չի համապատասխանում իր բովանդակությանը, մասնավորապես, վերնագիրն է. «Հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունները», մինչդեռ ամբողջ գլուխը նվիրված է միջազգային փորձին, այսինքն տարբեր երկրների (Էստոնիա, Լատվիա, ՌԴ, ԱՄՆ, Ուզբեկիստան և այլն) հարկային համակարգերին և դրանց առանձնահատկություններին:
3. Էջ 53-ում առկա է հետևյալ պնդումը. «...հարկերն օգնում են բարձրացնել կենսամակարդակը երկրում: Որքան բարձր է կենսամակարդակը, այնքան ավելի բարձր է սպառման մակարդակը:...», մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենսամակարդակի աճի դեպքում սպառողները սկսում են ավելի շատ խնայողություններ կատարել (համաձայն բանաձևի՝ $Y=C+S$): Ուստի, գտնում ենք, որ տվյալ պնդումը խիստ քննարկելի է կամ նման պնդում անելու դեպքում հարկավոր է նաև բերել համապատասխան հաշվարկներ ՀՀ համար:
4. Աշխատությունում առկա են աղյուսակներ, որոնցում նկարագրված տվյալներն ըստ մեզ կարելի էր ներկայացնել գծապատկերների տեսքով՝ տվյալներն ավելի պատկերավոր և գրագետ արտահայտելու համար: Այդպիսի աղյուսակներ են՝
 - Աղյուսակ 1. Հարկային ապառքների կառուցվածքն ըստ հարկատեսակների,
 - Աղյուսակ 2. Հարկային եկամուտների գծով ընդհանուր հարկային ապառքների դինամիկան,
 - Աղյուսակ 5. ՀՀ ՀՆԱ-ի և հարկային եկամուտների տվյալները,
 - Աղյուսակ 6. Հարկատեսակների գծով հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշները,
 - Աղյուսակ 7. ՀՀ հարկային մուտքերը ըստ հարկատեսակների,
 - Աղյուսակ 8. Հարկատեսակների գծով մուտքերի տեսակարար կշիռներն ընդհանուր հարկային եկամուտներում,

- Աղյուսակ 12. ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացված բնակարանների և անհատական բնակելի տների վարձակալության գործարքների քանակը:
5. Էջ 64-ում թվարկված են ՀՀ հարկային համակարգում առկա մի շարք թերություններ, որտեղ տարբեր կետեր ունեն նույն բովանդակությունը, ուստի հարկավոր է դրանք նկարագրել մեկ կետով, մասնավորապես.
- 2-րդ ու 5-րդը կետերը պարզաբանում են «հարկային մարմնի աշխատակիցների մասնագիտական ոչ պատշաճ պատրաստվածությունը»,
 - 3-րդ ու 4-րդ կետերը՝ «հարկային օրենսդրության անկատարությունը»:
6. Գլուխ 2.2 աղյուսակ 5-ում ՀՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի նկարագրության ընթացքում հեղինակն անտեսել է ՀՀ տնտեսությունում տեղի ունեցած բոլոր իրադարձությունները և վերագրել ցուցանիշի փոփոխությունները ստվերային տնտեսության նվազմանը: Մինչդեռ, օրինակ, 2020 թվականին համավարակի և Արցախյան պատերազմի պատճառով ՀՀ տնտեսությունում տեղի է ունեցել անկում՝ ՀՆԱ-ն և հարկային եկամուտները կրճատվել են, և ցուցանիշի փոփոխությունը կապված է եղել այդ հանգամանքների հետ, այլ ոչ թե ստվերային տնտեսության փոփոխման հետ: Գտնում ենք, որ աղյուսակի վերաբերյալ նկարագրությունն ու բացատրությունը ձևափոխման կարիք ունեն:
7. Գլուխ 3.1-ում բերված է 2007 թվականի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Հայաստանի հարկային կատարելագործման ծրագրի (ՀՀԿԾ) և Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվական կողմից համատեղ Fiscal Blueprints մեթոդաբանությամբ իրականացված ՀՀ հարկային մարմնի կարողությունների փորձագիտական գնահատում: Գտնում ենք, որ 2007 թվականի հետազոտության արդյունքների հիման վրա կայացնել եզրակացություններ ճիշտ չէ, քանի որ 17 տարիների ընթացքում ՀՀ հարկային համակարգում տեղի են ունեցել բազում փոփոխություններ, մասնավորապես, մշակվել է ՀՀ հարկային օրենսգիրքը, որը չի գործել 2007 թվականին, ներդրվել են հարկ վճարողների էլեկտրոնային համակարգեր, փոխվել են դրույքաչափեր և հարկատեսակներ և այլն: Ուստի, հարկավոր էր կամ ներկայացնել ավելի թարմ հետազոտության տվյալներ, կամ չներառել տվյալ հետազոտությունն աշխատության մեջ:
8. Գլուխ 3.3-ում հեղինակը փորձել է գտնել ԱԱՀ օպտիմալ սահմանաչափն ու դրույքաչափը, ինչպես նաև այլ հարկատեսակներով դրույքաչափերը: Գտնում ենք, որ գնահատման մեջ առկա են մի շարք թերություններ, որոնք փոփոխության և հստակեցման կարիք ունեն: Դրանք են.
- Ըստ աշխատության 138-րդ էջում բերված բանաձևում առկա՝ «8) ճ - պետական ծախսերի սոցիալական արժեքը» ցուցանիշը պետք է նկարագրվեր Հավելված 1-

ում, մինչդեռ Հավելված 1-ում առկա է միայն «Աղյուսակ 1. Մի շարք երկրների հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2018-2020թթ (%)»: Աշխատության ոչ մի այլ հատվածում տվյալ ցուցանիշի նկարագրության բացատրությունը տրված չէ:

- Համաձայն իրականացված հաշվարկների 1 հարկ վճարողի կողմից 1 տարվա ընթացքում հարկերի վճարման համար կատարված ծախսերը կազմում են 928,308 դրամ: Գտնում ենք, որ տվյալ ցուցանիշն օբյեկտիվ և իրատեսական գնահատված չէ, քանի որ անուղղակի հարկերը (այդ թվում՝ ԱԱՀ) արդեն իսկ ներառված են ապրանքների գնի մեջ և անձը ոչինչ չի անում դրանք վճարելու համար: Ներկայումս առկա են բազում այլ մոտեցումներ հարկ վճարողների ադմինիստրատիվ ծախսերը հաշվարկելու համար:
- Հարկային մարմնի կողմից կատարած ծախսերը բաժանելով ակտիվ հարկ վճարողների թվին նույնպես չի ցույց տալիս, թե՞ որքան գումար է ծախսում պետությունը մեկ հարկ վճարողի համար:
- Փորձ է կատարվել հաշվարկել ԱԱՀ սահմանաչափն ու դրույքաչափը փոփոխելու հետևանքով առաջացած տարբերությունը պետական բյուջեում, մինչդեռ դա արվել է միայն շրջանառության հարկի այդ տարբերության մասով: Բայց չէ՞ որ անտեսվել է մինչև շեմի գումարը, որը կբերի պետական եկամուտների կտրուկ նվազման (քանի որ դրույքաչափն առաջարկվել է իջեցնել մինչև 4.2%):

9. Գլուխ 3.3-ում առաջարկվում է ներդնել «քեշբեքի» համակարգը ՀՀ-ում, մինչդեռ այն արդեն իսկ ակտիվ կիրառություն ունի:

10. Գլուխ 3.3-ի էջեր 154-158 նկարագրված է մի շարք երկրների հարկային ծախսերի ցուցանիշը, սակայն գտնում ենք, որ կառուցվածքային առումով նպատակահարմար կլիներ այդ հատվածը տեղափոխել գլուխ 2-րդ, որտեղ և առկա է նմանատիպ վերլուծություն:

11. Հետազոտական աշխատանքում օգտագործված գրականության ավելի քան 80% մինչև 2015 թվականի աղբյուրներ են, մինչդեռ վերջին տասը տարիների ընթացքում նույնպես իրականացվել են բազում հետազոտություններ, որոնք ավելի արդիական են քան ներկայացվածները:

12. Առկա են նաև որոշ աննշան տեխնիկական խնդիրներ, մասնավորապես.

- էջեր 12, 71, 88, 96, 135, 137, 153-155 տրված են հղումներ ՀՀ հարկային օրենսգրքին, մինչդեռ օրենսդրական ակտերի անվանումներն ու հոդվածների համարները պարտադիր պետք է նշվեն տեքստում, այլ ոչ թե հղման տեսքով;
- մի շարք հղումներ հստակ սահմանված և ձևակերպված չեն, օրինակ, էջեր 22, 23, 25, 34, 35, 68 և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով թեկնածականատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Քնքուշ Հովիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները»** թեմայով թեկնածուականատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուականատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝

**Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝**

Է. Մ. Սանդոյան

**Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրները»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**

Ի. Բ. Պետրոսյան

**Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**

Կ.Վ. Ներսիսյան

**Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրները»
ամբիոնի ավագ դասախոս
տնտ. գիտ. թեկնածու՝**

Գ.Ա. Պետրոսյան

**Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրները»
ամբիոնի ավագ դասախոս
տնտ. գիտ. թեկնածու՝**

Հ.Գ. Պետրոսյան

**Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝**

Ռ. Ս. Կասաբաբովա